2/26.9/89

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«15» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0007-21

Ձեռնարկողը՝ «ԱՐՏ-ԷՄ» ՍՊԸ
Ք.Երևան, Կիևյան փողոց 11, բն.22

Գործունեությունը՝ ***Սառնաղբյուրի պեմզային ավազների հանքավայրի բացահանքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0007-21
<15> 01 2021թ.

Արագածոտնի մարզի
Սառնաղբյուրի պեմզային ավազների հանքավայրի բացահանքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԱՐՏ-ԷՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ «Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Զովասար համայնք

«ԱՐՏ-ԷՄ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվող Արագածոտնի մարզի Սառնաղբյուրի պեմզային ավազների հանքավայրի բացահանքի արդյունահանման նախագիծը մշակված է Ընկերությանը տրամադրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Սառնաղբյուրի պեմզային ավազների հանքավայրի արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս

Սառնաղբյուրի պեմզային ավազների հանքավայրի հայցվող տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի Զովասար գյուղից մոտ 1.9կմ հյուսիս-արևմուտք, իսկ Թալին քաղաքից՝ շուրջ 11կմ հեռավորության վրա:

Սառնաղբյուրի պեմզային ավազների հանքավայրի հաշվեկշռային պաշարները հաստատվել են ՀԽՍՀ ՊՏ հանձնաժողովի կողմից 1967թ. դեկտեմբերի 21-ին թիվ 165 արձանագրությամբ, հետևյալ քանակներով և կարգերով.

A – 1410 հազ/մ^3
B – 1381 հազ/մ^3

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

C – 2875 հազ/մ^3

Ներկայացված նախագծով նախատեսվում է օգտակար հանածոյի արդյունահանում: Արդյունահանված օգտակար հանածոն օգտագործվելու է որպես շինարարական նյութ:

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 6.53հա, նրա վերջնական եզրագծի մեջ ներառված օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են 862185.0մ^3:

Արդյունահանվող օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները կազմում են 739525.0մ^3:

Մակաբացման ապարների ծավալը կազմում է 27444.0մ^3: Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսված է 25 տարի:

Հանքավայրի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները կանխորոշում են դրա մշակումը բաց լեռնային աշխատանքների եղանակով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը:

- առավելագույն երկարությունը - 292.0մ,
- առավելագույն լայնությունը - 271.0մ,
- մշակման խորությունը - 60.0մ:
- օտարման տարածքը - 6.53հա

Նախագծվող բացահանքի անկյունային կետերի կոորդինատներն են.

1. X =4483858, Y =8408982
2. X =4483568, Y =8408949
3. X =4483568, Y =8409062
4. X =4483605, Y =8409063
5. X =4483594, Y =8409223
6. X =4483702, Y =8409238
7. X =4483780, Y =8409231
8. X =4483824, Y =8409167

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում, բացահանքում տեղ են գտել պեմզային ավազների հետևյալ կորուստները՝

1. Ըստ լեռնատեխնիկական պայմանների՝

- բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում՝ 118845.0մ^3 կամ 13.8%,

- օգտակար հանածոյի որակական հատկանիշները պահպանելու նպատակով մակաբացման ապարներից զատ հեռացվում է նաև օգտակար հանածոյի շերտը՝ 3815.0մ^3 կամ 0.4%:

Ընդհանուր կորուստները կազմում են՝ 122660.0մ^3 կամ 14.2%:

2. Շահագործական կորուստները, կապված օգտակար հանածոյի տեղափոխման հետ, ընդունված են 0.5%-ի չափով:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն՝ ըստ մարվող պաշարների, կազմում է 34490.0մ^3, իսկ ըստ պեմզային ավազների արդյունահանվող զանգվածի՝ 29581մ^3:

Նախատեսվում է բացահանքում լեռնային աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով (օրական մեկ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով):

Բացահանքային դաշտի բացման, ինչպես նաև 100% արտադրական հզորության հասնելու համար իրականացվում են հետևյալ ծավալի լեռնակապիտալ աշխատանքներ՝

02543163
ՓՈՐՁԱԲՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

1. Բացահանքի հյուսիս-արևելյան մասով անցնող ավտոճանապարհից դեպի 2121մ նիշ ունեցող հորիզոնի ներքին թեք կիսախրամի (մուտքային ավտոճանապարհի) անցում՝ L =1035մ, b =6մ, V = 1552.0մ^3,
2. 2121մ նիշ ունեցող հորիզոնից մակաբացման ապարների հեռացում – 860.0մ^3,
3. 2121մ նիշ ունեցող հորիզոնից պեմզային ավազի արդյունահանում – 2925.0մ^3,
4. 2116մ նիշ ունեցող հորիզոնից մակաբացման ապարների հեռացում - 524մ^3,
5. 2116մ նիշ ունեցող հորիզոնում առաջնային ճակատի ստեղծում - 800մ^3,
6. արտադրական հրապարակի կառուցում - 50մ^3,
7. արտադրական հրապարակի մակերես՝ 1200մ^2,
8. լցակույտի հարթակում բեռնաթափման հրապարակի կառուցում - 30մ^3,
9. լեռնակապիտալ աշխատանքների տևողություն՝ 0.1 տարի:

Նշված աշխատանքներն իրականացվում են էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով:

Հանքավայրի մշակումը նախատեսվում է իրականացնել ընդլայնական միակողմանի խորացման համակարգով՝ մակաբացման ապարները ներքին լցակույտեր տեղափոխելով:

Ընդունված համակարգի պարամետրերն են՝

- աստիճանի բարձրությունը՝ 5մ,
- աստիճանի թեքման անկյունը (աշխատանքային)՝ 70-75^0,
- աստիճանի թեքման անկյունը (մարված)՝ 60-65^0,
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը՝ 20մ,
- անվտանգության բերմայի լայնությունը՝ 1.5մ:

Հանքատար և լցակույտատար ավտոճանապարհները նախագծվելու են ելնելով լեռնային զանգվածի տեղափոխման համար նախատեսվող ավտոինքնաթափերի չափսերից ու անվտանգ երթևեկության պայմանից՝ հետևյալ տեխնիկական պարամետրերով.

- շարժման շերտերի թիվը՝ 1,
- լայնությունը՝ 6մ,
- ընդլայնական առավելագույն թեքությունը՝ 30%,
- ընդերկայնական առավելագույն թեքությունը՝ 100%,
- շրջադարձի նվազագույն շառավիղը՝ 15մ:

Լցակույտային ապարները կազմված են մակաբացման ապարներից և հողախառը պեմզային ավազներից:

Լցակույտային ապարների ընդհանուր ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 31259.0մ^3, իսկ մակաբացման ապարների ընդհանուր ծավալը լցակույտում՝ 35010.0մ^3: Մակաբացման ապարները պահեստավորվում են արտաքին լցակույտում:

Փուխր ավազակավային, ավազախճային ու հողախառը պեմզային ավազները պահեստավորում են միասին, իսկ հողաբուսական շերտը՝ ապարներից առանձին:

Լցակույտային ապարների մեջ հողաբուսական շերտի ապարների ծավալը բացահանքի եզրագծում կազմում է 6795.0մ^3: Նշված ծավալով հողաբուսական շերտի ապարները լցակույտում պահեստավորվում են առանձին:

Արտաքին լցակույտի ապարները տեղադրվում են բացահանքի եզրագծից դուրս, դրա հյուսիսային հատվածում՝ նախկինում արդյունահանված տարածքներում:

Հողաբուսական շերտի ապարներն արտաքին լցակույտի տարածքում պահեստավորվում են առանձին:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆՉԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Լցակույտառաջացումը կատարվում է բուլդզերային եղանակով:

Օգտակար հանածոյի հանույթը կատարվում է էքսկավատորային 8մ³ լայնությամբ ընթացքաշերտերով: Միաժամանակ շահագործվում է 1 հանքաստիճան:

Ապարի բարձման համար օգտագործվելու է ЭО-3322 մակնիշի, E=1.6մ³ շերեփի տարողությամբ, ուղիղ բահով սարքավորված էքսկավատոր: Պեմզային ավազների տեղափոխումը բացահանքից կատարվելու են սպառողների ավտոինքնաթափերով: Նախագծով ընդունված բուլդոզերը կօգտագործվի հիմնականում մակաբացման ապարների հեռացման, աշխատանքային հրապարակների ու ճանապարհների մաքրման, լցակույտերի կարգավորման և այլ աշխատանքների համար:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում բուլդոզերով հարթեցվում է փուխր ավազակավային, ավազախճային ու հողախառը պեմզային ավազների լցակույտի մակերեսը, շեպերը բերվում են համապատասխան թեքության և դրանց վրա վերևից տեղադրվում է հողաբուսական շերտի լցակույտի ապարները: Նշված աշխատանքների շրջանակներում հարթեցվում է նաև արտադրական հրապարակի, սպասարկող ճանապարհների տարածքը: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր տարածքը կազմելու է 1.0հա:

Աշխատանքները կատարվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով:

Հանքավայրի համար տեխնիկական ջրամատակարարումն իրականացվելու է ջրցան լվացող ավտոմեքենայով, իսկ խմելու ջուրը բերվելու է կցովի ջրի ցիստեռնով:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով նախատեսված է փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրցանի նպատակով:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցներն ու լցակույտերը:

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի երկօքիդը, ածխածնի օքսիդը (CO), ածխաջրածինները, ծծմբային գազը, մուրը: ՇՄԱԳ-ում հաշվարկվել են արտանետումների գումարային քանակները, որոնց մերձգետնյա կոնցենտրացիաների արժեքները գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում: Հանքավայրի շահագործման արդյունքում հաշվարկված տնտեսական վնասը կկազմի՝ 1573.36հազ. դրամ:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ ավտոտրանսպորտը և սարքավորումները:

Բացահանքի շահագործման ժամանակ բնապահպանական միջոցառումները ներառում են.

- Փոշին նվազեցնելու նպատակով տարվա չոր և շոգ եղանակին կատարել ջրցանում:
- Օգտակար հանածոյի տեղափոխման ժամանակ բեռնատարների թափքը ծածկել, իսկ անիվները լվանալ դրա համար նախատեսված վայրում՝ բացառելով ջրերի արտահոսքը:
- Անսարք մեքենաների շահագործումը բացահանքում պետք է արգելվի:
- Մեքենաների շարժիչների վրա պետք է տեղադրված լինեն չեզոքացուցիչներ, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը:

02543163
ՓՈՐՁԱԲՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

• Թափոնները պարբերաբար դուրս բերել բացահանքի տարածքից և տեղադրել հատուկ նախատեսված հարթակներում:

• Արգելվում է արտհրապարակից դուրս տարածքների խախտելը՝ թափոններ և այլն տեղադրմամբ:

Հողաբուսական շերտը 6795.0մ³ ծավալով պահեստավորվում է առանձին:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Հանքավայրի շահագործման ընթացքում կիրականացվի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ (մակերևութային ջրեր, մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, աղմուկ, կենսաբազմազանություն), որոնց իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

Հանքավայրի շահագործումը կթուլացնի սոցիալական լարվածությունը, քանի որ աշխատողների հիմնական մասն ընդգրկվելու են մոտակա համայնքներից: Անուշադրության չի մատնվելու նաև ազդակիր համայնքը, որի հոգսերի մի մասը իր վրա կվերցնի ընկերությունը:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Արագածոտնի մարզի Զովասար համայնքում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, Արագածոտնի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել 22 փետրվարի 2018թ. N191-Ն որոշման պահանջներով և շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը՝ ըստ ժամանակացույցի:
3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու, առաջացող աղմուկի,

թրթռումների թույլատրելի մակարդակները ու արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:

4. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետը. «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՏ-ԷՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Սառնաղբյուրի պեմզային ավազների հանքավայրի բացահանքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան